

* * * *

Լուսիկ մը փըրթաւ սարէն, կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
 Լուսիկ, դու լուսով կենաս, թէ կենաս պահիկ մը հուտայ.
 Երկու խօսք գանգատ ունիմ, գանգըտիմ, դուն ալլայ գընա.
 Գընա՛ դարիբիս ըսէ՛, չըկենայ ու ելլայ ու գայ.
 – Խօսքունքըդ գըլխուս վըրայ, չըգիտեմ դուռը (3) դարիբիդ:
 – Եկո՛ր նըշանով ցոյց տամ, բարձըր պատ ու ծառն ի վըրան.
 Նըստեր է ծառին շուքը, նուշ դըրեր շաքար կու ծախէ.
 Ամենուն աժան աժան, իս մոռցեր՝ նուշ կուծախէ:
 Կարմիր խընծորի պայոս, աճապ ո՞վ ըրաւ քեզ ալոց.
 Ով որ քեզ ալոց արաւ, ան կենա՛յ ծովուն ՚լ երերուն.
 Աճապ խարիպին տիրուն սիրտն ինտո՞ր արեւ կու ծագէ:
 Ոչ սիրտս է արեւ ցաթեր, ոչ երեսս է պարզ ծիծաղցեր:
 Ես երկու խարիպ ունիմ, մէկն հիւսիս է, մէկն է հարաւ.
 Զիւսիսինըս փըրթեր ու գար, հարաւինս ալ հետը բերեր:
 Աճապ տի լընի՞ օրիկ, խարի՛պ, գաս դուռս, առնեմ ի տուն,
 Թեւիկս ալ շըլլիդ ձըգեմ, մանտըրտիկ հետըդ խօրաթեմ:

* * * *

Խարիպս հիւսիսէն փրթաւ, պօզ ձիով ու սալթանաթով.
 Բռնեցի ճորով զօրով պագ մ՛առին հազար նագերով,
 Ան պագին քաղցրութենէն բըռընկեր սրտիկս ու կ՛այրի:

* * * *

Ես ալ խարիպին ձայնը կ՛առնէի նը կ՛արմնայի.
 Եկաւ իմ գլխակս ելաւ, կ՛ողորմիմ ամէն խարիպի:

ՈՂԲ Ի ԴԻՄԱՑ ՊՈԼԻՍ ՎԱԽՃԱՆԱՑ ՊԱՆԴՈՒՄՏԻՆ

* * * *

Ամա՛ն, ամա՛ն, իս Իւսկիւտար անցուցէք,
 Սեւ ծովը ճեղքեցէք, ճամբան ցըցուցէք:
 Տարեք իմ հօրըս դուռը, վար դըրեք ու պահ մի լացէք.
 Մարիկս ալ ի դուրս բերեք, ծարուրած աչուին լացուցէք.
 Աղբարս ալ ի դուրս բերեք, տամպուռին թելը կըլյեցէք.
 Եարուկս ալ ի դուրս բերեք, ետըլէն ծամը քակեցէք: